ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001175, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-29, «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ Թ., -

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 29.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG5E-568E-6351-D7EF**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001175-12

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

29.09.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 29.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG9A-96E2-4A7C-5BB7
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
|---|---|---|---|
| ՄԻԽԱԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Հ | 000950 | 2024-08-01 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG9A-96E2-4A7C-5BB7**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ

РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "ГЕГАРКУНИК НАИРИ"

RA MARZ GEGHARKUNIK LLC "GEGHARKUNIK NAIRI"

հեռ. (093) 18-44-18 էլ. փոստ.gexarquniqnairi@mail.ru

№ Ս-25-7 «24» փետրվարի 2025թ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի N70/1 հասցեով 05-005-0010-0056 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված ավտոսպասարկման կետի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ

Պատվիրատու՝
Վարդենիս համայնքի
Բնակիչ՝ Լ. Մելիքյան

Կատարող՝
«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Ավետիսյան

Գավառ 2025թ.

«Հաստատում եմ»
«24» փետրվարի 2025թ.

«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ տնօրեն

________________ Ա. Ավետիքյան

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի N70/1 հասցեով 05-005-0010-0056 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված ավտոսպասարկման կետի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ

Աշխատանքը կատարվել է նշված հասցեով հողամասի սեփականատեր (սեփ. Վկ N N06022025-05-0042) Լյուդվիկ Մելիքյանի առ. 19.02.2025թ. դիմումի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված շինության ակնադիտական ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է «Երկրաշարժադիմացկուն շինարարության, նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04–2020 նորմերի և «Քաղաքաշինության, Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծերում և կառուցապատում» ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ի համաձայն:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող շինության տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը Amax=0.4g (ՀՀՇՆ 20.04 – ըստ հավելյամաս 1-ի):

Զննված շինությունը հարթ տեղանքի վրա 2013 թվականին իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ավտոսպասարկման և շվաքարանի շինություններից բաղկացած, համապատասխանաբար մոտ 6.4x21.0մ և մոտ 9.6x9.7մ եզրաչափերով, մեկ հարկանի, հասարակական գործառնական նշանակության առանձին կառույց է (նկ. 1):

1. Շինության ընդհանուր տեսքը



Ավտոսպասարկման շինության (նկ. 2) կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական կրող ու լայնական պատերով և վերնածածկով:

2. Ավտոսպասարկման շինության տեսքը



Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից:

Պատերը ունեն 45-20սմ հաստություն և իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Բոլոր պատերը, բացի բակային ճակատի պատից, արտաքինից սվաղված են ցեմենտավազային շաղախով:

Վերնածածկն իրականացված է փայտե հեծանային համակարգով, կախովի առաստաղի տեսքով:

Հարկի բարձրությունը կազմում է 2.9մ:

Տանիքը միալանջ է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին ազատ ջրահեռացմամբ:

Շվաքարանը տեղակայված է ավտոսպասարկման շինության գլխավոր ճակատի տեղամասում (նկ. 3):

3. Շվաքարանի տեսքը



Շինության կոնստրուկտիվ համակարգը լուծված է շրջանակով ու պատով և վերնածածկով: Ընդ որում նշված պատը հանդիսանում է ավտոսպասարկման շինության գլխավոր ճակատի պատը:

Շրջանակի սյուների հիմքերը կետային են, միաձույլ երկաթբետոնե սյունակալներից:

Շրջանակը իրականացված է եռանկյունաձև լայնական հատվածքի միաձույլ երկաթբետոնե սյուներով և պողպատե խողովակից պարզունակով:

Վերնածածկն իրականացված է պողպատե տարրերից կազմված ֆերմա հեծանային համակարգով:

Տանիքը միալանջ է, պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Հողամասը պարփակող ձախակողմյա և հետամասի կողմից պարիսպը իրականացված է ժապավենային խամքարաբետոնե հիմքերով, կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ (նկ. 4):

4. Պարիսպի տեսքը



Զննմամբ պարզվեց հետևյալը՝

❖ Ավտոսպասարկման և շվաքարանի շինությունների կրող կոնստրուկցիաները չունեն ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում.

❖ Շինությունը գտնվում է ավարտուն վիճակում (նկ. 4).

Ելնելով հետազննության արդյունքներից վառելիքային ավտոսպասարկման կետի շինության տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է երկրորդ աստիճանի:

4. Շինության ներքին տեսքը



Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով ավտոսպասարկման շինության բավարար տեխնիկական վիճակը եզրակացվում է՝

❖ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի N70/1 հասցեում գտնվող վառելիքային ավտոսպասարկման շինությունը պիտանի է բնականոն և անվտանգ շահագործման համար.

Մասնագետներ՝ Ռ. Խաչատրյան

Մ. Հարությունյան